


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պազար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրագրութիւն համար 80
» » վեցամսեայ » 50
Օտար երկիրներ տարեկան ծախս 25
» » վեցամսեայ » 14
Թղթատարի ծախսը խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր :

“ԻՄ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԱՆ,”

Այս վերնագրով յօդուած մը գրած է
Արշակ Զօպանեան, Նոր Կեանքի վերջի թիւին
մէջ, որ ապրիլ 13ի թուականը կը կրէ :

Այս վերջի հինգ, տասը տարիներուն մէջ,
ուր ազգային եւ կամ հայրենասիրական
գրականութիւնը մոլորութիւն մը դարձաւ քիչ
շատ ամեն գրագէտի եւ կամ նոյն իսկ այս
անունին արժանի չեղող ամեն հրապարակա-
դիրներու համար, Զօպանեանի այս յօդուա-
ծը թերեւս առաջինն է որ կարենայ ճշմար-
տապէս ծառայել հայութեան օգտին :

Այն օրէն ի վեր որ խել մը բազմաթիւ
դիրքեր հրապարակագրութիւնը իբրեւ միջոց
եւ հայրենասիրութիւնը իբրեւ արհեստ ընտ-
րեցին, իրենց բաժին ինկած կենսապայքա-
րի գոտարութիւնները թերեւցնելու համար,
հայ ազգը շուարեցաւ մնաց այն շատ մը
ճամբաներուն առջեւ որոնք դէպի փրկութիւն
պիտի տանէին զմեզ, եթէ հաւատարմութեամբ
լայնը այդ շահախնդիր ազգասէրներու խօս-
քին :

Այսինքն ուսական քաղաքականութիւնը
առաջ կը քաշէր եւ այն ինչը կը խոստովէր ճա-
ռերէն կապաւոր մեր ազգին փրկութիւնը :

Ամենուն բերնին եւ շատերուն գրուած-
քին մէջ տինամիթի, տէրորի, կեդրոնացումի,
ապակեդրոնացումի, միութեան, Ե՛րբ յօդ-
ուածի, դեսպանի, հերոսի, հայրենիքի, ռում-
բի եւ ցոյցի պէս բառեր կը վիտային, առանց
սակայն այս գործերուն եւ կամ խօսողնե-
րուն մէջ գտնուելու մէկը, որ պէտք եղած
հիմնական գիտակցութիւնը ունենար այդ
բառերու իմաստին, ծանրութեան, կարեւո-
րութեան եւ կամ գործածելու եղանակին
վրայ :

Դպրոցներէ վիժած շատ մը աշակերտներ եւ
կեանքի մէջ չի յաջողած իմաստակներ շա-
բաթը առնուազն երկու յօդուած կը գրէին,
մեր աչքին փոշի նետելու իրենց Մըրօներով,
Խըրօներով, Նահատակներով, երեւակայա-
կան արշաւանքներով, ֆէտայիներով, քօմի-
թէներով եւ հանգանակութեան անվերջանալի
ցանկերով :

Ամենքն ալ մէյմէկ Ռօջֆօն կը կարծէին
իրենք զիրենք, երբ ազատութեան, հայրենիքի,
հարստահարութեան, Սասունի, Տաւրիկի,
վատ թուրքի անգութ եւ խարդախ եւրո-

պայի, նենգաւոր Ալաիոնի պէս բացատրու-
թիւններ կը գործածէին այն յօդուածներուն
մէջ որոնց ամեն մէկը մեր հաշտաւոր քաջ
բայց միամիտ եղբայրներուն կորստեան պատ-
ճառ եղաւ :

Մեզի չէ տրուած եւ մեր կարողութենէն
վեր է նպաստաւոր եւ կամ աննպաստ վճիռ
մը արձակել այն դէպքերուն եւ եղելութեանց
վրայ — արդիւնք կամ պատճառ այդ արհես-
տական հայրենասիրութեան — որոնց տխուր
յիշատակութիւնով սեւցած պիտի ըլլայ մեր
ժամանակակից պատմութեան այս վերջի 7—8
տարիները նկարագրող մասը :

Բայց միշտ հիացում մը, գոհունակու-
թիւն մը եւ երախտագիտութիւն մը զգացած
ենք այն հայերուն համար, որոնք առանց անի-
րականալի կամ մահաբեր ծրագիրներ ունե-
նալու, պարզ, ուղիղ եւ օգտակար ճամբան
ցուցուցած են մեր տառապեալ ազգին, ա-
ռանց պահանջելու որ իրենց մատուցած այդ
ճառարութեան փոխարէն “հերոս” լուսա-
պսակ մը դրուի իրենց ճակտին վրայ :

Քիչ անգամ, — երբեք չըսելու համար —
առիթը ունեցած ենք կարդալու այդպիսի
փառաւոր հատուած մը որպէս է Զօպան-
եանի այդ գրութիւնը :

Իմաստասէրին հայեացքը, հայրենասէրին
ոգին, ճշմարիտ հայուն զգացումները եւ ան-
շահախնդիր հոգեբանին ուսումնասիրութիւնը
կը գտնես անոր ամեն մէկ տողին մէջ :

Իր ազգին իրապէս օգտակար ըլլալու
մարմաջը կայ այդ գրողին քով, որմէ կուզես
փոխանձուիլ :

Մեր ազգը դեռ մարդկութեան չէ տուած ա-
մէն ինչ որ կրնայ Տխուր պարագաներ, աննպաստ
կացութիւն մը, անշուշտ խոչընդոտ եղած են մեր
ուժերուն ծառայմանն ու ծաղկմանը. բայց ինձի կը
թուի որ խոչընդոտին մեծագոյնը ներքին եղած է.
մեծ խեղալ մը պակաս է մեզի. նիւթական, ան-
միջական ու սահմանափակ նպատակներու ետեւէ
եղած ենք միշտ. երբեմն երբեմն հոս հոն երեւցած
մեծ անհատականութիւնները յայտնութիւն համա-
րելով, ազգը հաւաքական գեղեցկութեան յատուկ
գոյն մը չէ գրած մարդկային համապատկերին մէջ,
այնպէս որ հայ բառը մարդկութեան բառարանին
մէջ ընդհանուր դասագրքի մը չի ցուցնէր ինչպէս
յոյն, լատին, հնդկի կամ չինացի բառերը : Չենք
իսկ հետամտած հարկաւոր խնամքով ի վեր հանել
եւ աշխարհի ճանչցնել այն քիչը որ ըրած է մեր
ցեղը. յաւերժական պատակաւորներ չէ զոքայուցած
են ուժ մը որ կրնար անհուն արդիւնք տալ եւ որ
կազմակերպուած, միացած եւ ընդհանուր բարձր
նպատակի մը ուղղութեամբ չըլլալուն համար տարողնած
ու մութի մէջ մնացած է : Պարսիկը, Արաբը,

Հրեան, տիեզերապէս ծանօթ են. անոնց գերը
յայտնի է մարդկային գործին մէջ. մեր ջարդերէն
առաջ, մարդ չէր գիտեր հայ ցեղի մը գոյութիւնը :
Ասկից աւելի կարեւոր խնդիր չի կայ մեզի համար :
Հայրենասէրը ա՛ն է՝ ըստ իս՝ որ այս դառն ճշմար-
տութիւնը կը տեսնէ եւ կ'աշխատի միջոցը գտնելու
որ մարդկութիւնը մեզ ճանչնայ :

Այս տողերով, երիտասարդ բայց արդէն
հոշակաւոր գրագէտը, Արշակ Զօպանեան,
մեզ ցոյց կու տայ այն ճանքան որմէ պէտք է
ընթանանք : Խոշոր, անհասկանալի, ռազմագի-
տական, կուսակցական բառեր չի գործածեր
ան մեր ազգային զգացումները շարժելու հա-
մար, ընդհակառակը, գոյուր, ընտանի, հմայիչ
բառեր են որ հատիկ հատիկ իրարու քով
շարուած են եւ որոնց ամբողջութիւնով կապ-
ուած է այն յօդուածը զոր ինք “Իմ հայ-
րենասիրութիւնս” կանուանէ, մինչդեռ մենք
պիտի մտնէինք որ “Մեր ամենուս հայրե-
նասիրութիւնը” ըլլար ան :

Ահա այս յանձնարարութիւնը ընելու հա-
մար է որ փութացինք Նոր Կեանքի ութե-
րորդ թուի խմբագրականին վրայ խօսիլ, ծա-
նօթացնել անոր արժանիքը եւ խրատել ամեն
հայու կարգաւ այդ յօդուածը եւ այդ օգտա-
կար, կենսատու ընթերցումէն ետքը կարելի
չէ որ չի հետեւինք այն խրատին որ այնքան
անկեղծ կերպով մեզ կուտայ տարիքով պըզ-
տիկ բայց տաղանդով մեծ գրագէտը :

Արեւելակ զպրոցականներու ձեռքէն ապտա-
րու է ազգը : Մեր աղէտները աշխարհ տալիսու վրայ
ըրին. ահա երբեք տարի է որ Եւրոպան իրար ան-
ցած է. մեր արիւնը նպաստած պիտի ըլլայ ուշ-
խարհին երեսը ձեւափոխելու գործին. ասկիս մեծ
դեր մըն է որ մենք խաղաղած եղանք անգիտակ-
ցարար : Կը մնայ հիմայ գիտնալ այն օգուտը զոր
մենք ալ պէտք է քաղենք, այսպիսի վնասէ յետոյ,
բոլոր այս դժբաղդութիւններէն : Ինչ որ ալ ըլլայ,
Տաճկաստանը չի կրնար երկայն ատեն մնալ այս
արեւնոտ փտութեան վիճակին մէջ որ ամբողջ
աշխարհ թունաւորեց : Տաճկաստանը անշուշտ բնա-
կելի երկիր մը պիտի դառնայ, եւ քաղաքակրթու-
թիւնը պիտի անարգել հոն իր գործը սկսի, այս
կամ այն եւրոպական գործութեան ձեռքով : Այդ
նոր թուականը բացուած ատեն, պէտք է որ մեր
ժողովուրդը պատրաստ ուժեր ունենայ, երկրին մէջ
զորեղ դիրք մը գրաւելու. ապա թէ ոչ՝ կը ջնջուինք՝
աւելի դիւրաւ՝ եւրոպական տարրին տիրական հո-
սանքէն քան Տաճկին սուրէն :

Հայ տղաք, գրուելիք կախեցէք ու աշխատե-
ցէք : Դուք պիտի վերականգնէք փրած քաղաքուած
չէնքը : Բայց չինել գիտցէք : Կուցէ՛ք, կոփեցէ՛ք
ձեզի համար քաղաքակրթութեան դէնքերը որպէս
զի վաղը անոնցմով մեր ցեղին դիրքը ամուր պա-
հէք հայրենի հողին վրայ, եւ անոր վարկը օտար
երկրի մէջ : Այդ գէնքերը մարդ չի կրնար ձեր ձեռ-
քէն խել, եւ անոնք միշտ յաղթական են :

ԻՄ ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆՍ

Այս ալ գլխէս անցաւ :
Եւ ո՞վ է ան, որ կեանքին մէջ գտնէ անգամ մը չէ փորձած անձնասպան ըլլալ. մինակ եղանակները տարբեր են. ոմանք փոխանակ ատրճառակով մը իւրենք զիրենք ոչնչացնելու՝ գրագրի պաշտօն մը կատանանքն հայ վաճառականի մը քով և ուրիշներ ամուսնութիւնը կընտրեն իրեն ամիս և անիսուս ասփելի միջոց ինքնասպանութեան :

* * *

Վայրկեան մը ունեցայ կեանքիս մէջ ուր ամեն բան սեւ կերեւար աչքիս :

Եւ որովհետեւ Լօյս դարձած էր զիս սիրելէ, կը կարծէի թէ արեւը այլ եւս իրաւունք չունէր առ տուն կանուխ ելելու և իրիկունը մութը չի կրնար հրապարակէն քաշուելու, լուսինը՝ ջիզերս կը գըրգռէր իր սպուշ, միօրինակ նայուածքով, ծաղիկները, թռչունները, երաժշտութիւնը և խարտեալ աղւոր աղջիկները՝ դուրս այնքան կը սիրէի երբեմն, դադարած էին յանկարծ որ և է հրապուր ունենալէ : Դաս տարկութիւն ամեն կողմ, պատրանք ամեն բանի մէջ, ունայնութիւն և ոչնչութիւն ամեն տեղ և ամեն ժամանակ :

—Ապրիլ չարժեր կըսէի, քսան տարեկանի տնփորձութեանս մէջ : Երկրիս հետ ա՛յլ որ և է կապ չունիմ, բան մը չի կայ որ զիս վար դնէ հոս, քանի որ Լօյս . . . :

* * *

Լօյս . . . Բայց չէք գիտեր ինչ աղջիկ էր ան : Հազիւ քսան տարեկան, խոշոր աղւոր աչքեր ունէր, ճերմակ փայլուն ակունքեր, պղտիկ սիրուն բերան մը, երկայն մազեր, ճիշտ ինչպէ՜ս կուներան այն ամեն աղջիկները որոնք սիրահարի մը գրչին տակ կիչնան :

Դարուցէն կը սիրէինք զիրար, հետեւեալքս եթէ ոչ ուսմանը, բայց գտնէ մեր սէրը հիմնական բան մը ունէր իր մէջ :

Անանկ աղւոր բաներ կըսէինք իրարու որ . . . Եւ ի՞նչ հարկ կայ որ հոս կրկնեմ մեր երբեմնի ըսածները : Մուշէն սկսեալ մինչև Բարիզ ամեն տեղ, բաճար մի և նոյն չարականը կը կարգայ իր սիրած աղջկան, մինակ սա տարբերութիւնով որ Մշեցի սիրահարը զգացածը կը զրուցէ իսկ Բարիզինը՝ մոտ ծածը :

* * *

Եւ որովհետեւ Մուշի և Բարիզի ճիշտ մէջտեղը կը գտնուէի, Պոլիս, ըրած սիրահարութեանս մէջ թէ զգացում կար և թէ միտք : սուսընդ Լօյսն կը գգուէի, իսկ երկրորդը կը սուսունէր ասպագայ աներովս գրամարկդին շուրջը :

Այն օրը որ առանց ինծի խոսք տալու որոշեցին Լօյսն կարգել, ամերիկացի հայու մը հետ — ասպուշութիւն մը որ այնքան կըլլայ, որովհետեւ չեմ հասկնար թէ ի՞նչպէ՜ս կարելի է աղջիկ տալ մարդու մը որ Ամերիկա բնակելուն համար ստիպուած է մեր քնուցած տները արթննալ և քնանալ երբ մենք կարթննանք, անպատեհութիւն մը որ ամենէն շատ աչքի կը զարնէ ամուսնութեանց պարագային մտնաւանդ — այո՛, այն օրը որ տեսայ թէ Լօյսն ուրիշներ պիտի ըլլար, մէկ երկու ըսելու ժամանակ չի տուի ինքզինքիս և որոշեցի մեռնիլ :

* * *

Մինակ՝ մարդու պէս մեռնելու ճամբան գտնելու էր : Դաս . . . : Փառք Աստուծոյ եթէ ոչ ասպրելու : Բայց գտնէ մեռնելու համար միջոցներ չեն պակսիր աշխարհիս վրայ :

Առաջինը որ միտքս եկաւ, սենեակին մէջ ածուի վառելով խեղդումս ըլլալն էր, բայց ետքէն մտածեցի թէ այդ տեսակ անձնասպանութիւնը աղբատ, լքեալ աղջիկներուն առանձնաշնորհումն է և ինքզինքը յարգող մէկը պէտք չէ դալի անոր :

Դանակով անձնասպանութիւն, ատ ալ աղէկ չէր, որովհետեւ ձեռքին մէջ արիւնոտ դանակ մը ունենալը միշտ վտանգաւոր է և տգեղ կասկածներ կուտայ տեսողին :

Չուսնով կախուիլ, ատ ալ գործիս չէր դար,

որովհետեւ քանի մը անգամ կախուած մարդու հանդիպած եմ և սա համոզումը գոյացուցած եմ որ, իրաւ, մարդուս համար անկասկա զիսք մը ունենալը շատ աղւոր բան է բայց կախեալ զիրքը լնա :

Միջոց մը եւս կար՝ թոյնը : Բայց, եղբայր, այս օրուան օրս վատահոգութիւն չեմ կրնար ունենալ դե. դադար չի մը վրայ : շատ անգամ կը պատահի որ բժշկուելու համար դեղ կառնես և թոյն կուտան բեզի և ինչէ՞ն գիտնամ որ թոյն ուղած օրս ալ անվնաս լան մը չպիտի տան ինծի :

Պատուհանէն վար նետուելու լաւ, բայց ինկած ատենս մէկ կողմս կտորի՞նէ :

Մոմապահութեամբ մեռնիլ, ատու՛յ, սլ ախորժակս արգելք կըլլար :

* * *

Վերջապէս գտայ :

Մութ նետուելէն աւելի խեղայի, աւելի ապահով աւելի խնայողական ճանաչող չի կար, այո՛, այո՛, ծովամոյն ըլլալ թող տալ որ ձուկերը ուտեն քեզ, փոխանակ դուռն զանոնք ուտելու :

* * *

Մնաս բարով Լօյս, մեռնիլ կերթում կոր :

Աղթթ մը ինծի համար և աշխարհ բեզի թող ըլլայ :

Հոգ չէ թէ սրբայութեան դռները երեսիս պիտի գոցուին, բայց գտնէ, մատուցներուդ ծայրովը, պաշիկ մը զրկէ ինծի հեռուէն :

Կը յիշեմ, Լօյս, առաջին անգամ երբ քեզ տեսայ, վարդագոյն մետաքոէ քոսած մը հագած էիր . . . Բայց, աւա՛ղ, այս ամենը յիշելու ժամանակ չունիմ, մեռնիլ կերթում կոր, անգո՛ւթ :

* * *

Եւ իրաւ ալ ծովեզերքը գացի իմ սեւ խորհուրդս կատարելու համար . . . : Բայց վերջի վայր կեանքին միտքս ինկաւ : Բժիշկիս յանձնարարութիւնը . . .

—Պաշտօնէն զտուցուցի, պատուիրած էր ինծի :

Ուրախ դուրսից տուն դարձայ : Եթէ հարկ ըլլար որ ամեն ատեն աղջիկ մը կարգուէրուն՝ իր նոսիկին սիրահարները անձնասպան ըլլային, այսօր աշխարհիս վրայ մարդու երես բիշ մը դժուար կը տեսնէինք :

ՌԱՏԱՄԵՍ

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Այս պահուս Բօն Սախո գտնուող «Այի Սախա փաշա» տաճկական փոխադրանաւին մէջ, երեքշաբթի օր, մեծ կուռ մը պատահեցաւ թուրք և սուրիայի զինուորներուն միջև որոնցմէ 1200 հոգի կը գտնուէին այս շոգեհանաւին վրայ և զորս Բ. Դուռը Սանա կը զրկէր զսպելու համար այն չիթութիւնները որոնք Եմէնի մէջ կը տիրեն քանի մը ժամանակէ ի վեր :

Կուռին պատճառը եղած է այն ատելութիւնը և նախանձը որ ընդհանրապէս կը տիրէ այդ երկու իրարու բոլորովին հակառակ տարրերուն մէջ : Տաճկական բանակին մէջ գտնուող թուրք և սուրիայի զինուորները առաջին անգամ չէ որ իրարու կը բաղխին :

Ահա այս կարգի կուռ մըն է որ ծագեցաւ Այի Սախա փաշա շոգեհանաւին մէջ :

Նաւուն հրամատարը մեծ դժուարութեամբ կըրցաւ զսպել այդ անկարգապահ զինուորները որոնցմէ շատեր վերաւորուած են այդ կուռին միջոցին :

Թէև Բօն Սախոի կառավարիչը ոստիկան զինուորներ զրկած էր շոգեհանաւին վրայ, բայց հրամանատարը թող չի տուաւ որ միջամտեն :

—Թայմզի Աթէնքի թղթակիցը կը հե-

ռագրէ թէ Բ. Դուռը մտադիր է Թեսալիաէն չի քաշուիլ մինչև որ Կրէտական խնդիրը չի կարգադրուի :

—Լորտ Բրոմլը, եգիպտական գործերու վրայ Լոնտոն զրկած իր տարեկան տեղեկագրին մէջ՝ իրաց արդի վիճակը պահպանելու կողմը ըլլալը կը յայտարարէ :

—Իտալիոյ մէջ քանի մը օրէ ի վեր ժողովուրդը ցոյցեր ընելու վրայ է, հացի սուղութեան և տնտեսական տագնապին պատճառաւ :

Հետեւաբար կառավարութիւնը պաշարման վիճակի մէջ դրած է Բիաչէնցա, Պօլօնեա, Անքոնա և Պաուի քաղաքները :

—Նոյնպէս Սպանիոյ մէջ, քիչ մը հացի և քիչ մըն ալ քաղաքական պատճառներով, պաշարման վիճակի մէջ դրուած են Վալանս և Օվիէդօ :

—Իր գործելու ամբողջ աղատութիւնը պահելու համար, Դերմանիա չէզոք մնալու յայտարարութիւնը չպիտի ընէ ներկայ պատերազմի միջոցին՝ օրինակ բերելով առջի Ձինօ-ձաքոնական պատերազմը որ թոյլատրեց իրեն միջամտել ի նպաստ Ձինաստանի՝ Պրանսայի և Ռուսիոյ հետ միասին :

—Նոր պատերազմ մըն ալ :

Նիւ-Եօրթ-Հէրալտի Բանամայէ ստացած մէկ հեռագրին նայելով պատերազմը անխուսափելի դարձած է Նիքարակուայի և Բոսնիա Ռիքայի միջև (կեդրոնական Ամերիկա) : Գոթա Ռիքայի Իկլէսիաս զօրավարը արդէն դէպի սահմանագլուխ ճամբայ ելած է, բանակին գլուխը անցնելու և զինուորական գործողութիւնները սկսելու համար :

—Լորտ Սօլպէրի, Ալպէրթ Հոլի մէջ ճառ մը արտասանելով գովեստներ շուրջած է այն սպաններուն և զինուորներուն վրայ որոնք Սուտանի մէջ պատերազմեցան վերջերս : «Ինչ օրէն այդ սկսուած գործերը առաջ պիտի մղուին և կատարեալ յաջողութիւն մը պիտի ունենանք», աւելցուցած է Անգլիոյ նախարարապետը :

ԱՅԺՄԷՆՈՒԹԻՒՆ

Ա Մ Ա Ռ Ը

Խօսիմ ալ գնաց :

Այս պահուս, պարսպաւոր վրայ եղող սան մը երեւոյթք ունի Գահիթէն :

Ամառուան այս առաջին օրերուն մէջն է որ ամենէն շատ այժի կը գարնէ ընկերական վիճակներու տարբերութիւնը :

Կայսրական իրաւ առջեւ յանգող պողոտաներուն եւ փողոցներուն մէջ, կառքի, սայի, ճամբորդի եւ քեռակալի սևակի իրաւանցում մը կայ որ կարծես կրակէ փախչող անքոյս մըն է որ կը վազէ ասպառով վայր մը :

Ամեն անոնք որ ամառնային օդափոխութիւն մը ընելու ո՛չ միջոցք ունին եւ ո՛չ դիւրութիւնը, ասպառովապէս հաշտ ալօջ լեւնայիւր այն երջանիկ արարածներուն, որոնց երեսին վրայ դպրոցէն փախչող ճղու մը հաճոյք կը փայլի :

Նախաւոր եւ պաշտօնեայ, վաշխառու եւ հասառու, դիւսանագէս եւ վաճառական,

ամենին աչ սենդային շարժումով մը կը
նկատուին էքսպոնէի վակուումներու մէջ եւ ի-
րենց շրթներուն վրայ այնպիսի գոհունա-
կութեան յետ գիտեր ինչ մը ունին որ կար-

ծես Գահիրէ մնացողին բոլին կը խնդան:
Մարդու վրայ սօսիալիսթ ըլլալու փա-
փափ մը կուգայ այդ վայրկեանին, հաւատա-
ցեմ:

Գահիրէի ամենէն բանուկ կեդրոննե-
րը ամալոթեան մէջ քաղաած են, աչ յետ
սեսներ երկայնահասակ ամերիկացիները,
անձոննի գերմանացիները, կարմիր երեսով
անգլիացիները որոնք իրենց հարստութիւնը,
սքիւնը, քոֆախսը եւ հետաքրքրութիւնը կը
պսցնեն ֆադային մայրերուն վրայ դեկ-
տեմբերէն մինչեւ ապրիլ:

Յանգաւորի երեւոյթը ունին ամեն ա-
նոնք որոնք հոս մնալու դասապարտուած են:
Վհասութիւնը՝ դեմքերուն եւ քոյրութիւնը՝
ամբողջ մարմիններուն վրայ կը ափոտի,
ոչ թէ անոր համար որ կը մնան, այլ որով-
հետեւ յետ կրնար մեկնիլ:

Եւ երբ կը մտածենք թէ ամենէն փչ աշ-
խատողները, ամենէն փչ ստապողներն են
որ հանգստութիւն կը փնտռեն զով կշիւա-
նեալ, անգամ մը եւս կը հիանալ
այն դասակարգին վրայ որ ամառ ձմեռ չի
գիտեր, քափին պաղին անտարբեր, օրն ի
քուն կաշխատի, կը յոգնի, կը տառապի, ա-
ռանց վայրկեան մը հանգիստ առնելու:

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Այսուհետեւ եւ մինչեւ ձմեռնամուտ Քա-
ղաքական ժողովը փոխանակ շաբաթը անգամ
մը նիստ ընելու, տասնը հինգ օրը անգամ մը
պիտի գումարուի Առաջնորդարանի մէջ:

Երէկ՝ Գալստեան վարժարանի հայ ու-
սուցիչներուն եւ ուսուցչուհիներուն ֆրանսե-
րէն լեզուով խմբագրուած կանոնադրութիւն-
ներ բաժնուած են Հոգաբարձութեան կող-
մանէ: Այդ կանոնադրով ասկէ վերջը վար-
ժութիւնները, առանց Հոգաբարձութեան դի-
մելու, իրաւունք չպիտի ունենան աշակեր-
տութիւնները ուղած ժամանակին արտաքին
վարժարանէն:

Ընթերցասիրաց ընկերութեան ընդհա-
նուր ժողովոյ դիւանին եւ գործադիր ժողովի
ամբողջութիւնը հրաժարած ըլլալով նոր ընտ-
րութիւններ կատարուեցան չորեքշաբթի օրն
Ընդհ. ժողովոյ դիւանի անգամ ընտրուեցան

Տիար Բ. Նահապետեան	Ա. Ասեմապետ
» Թ. Արիւսար	Բ. »
» Ն. Աշագարի	Ա. Ասեմապետ
» Ա. Արիւսեան	Բ. »

Իսկ գործադիր ժողովոյ անգամ ընտ-
րուեցան Տեառք Ա. Աստուածատուրեան, Մ.
Արիւս, Կ. Հալէպլեան, Թ. Նահապետեան,
Վ. Պարծախեան, Թ. Սէմէրեան եւ Թ. Տէր-
վիշեան:

Կը սիրենք յուսալ թէ այս նոր ընտրուած
գործադիր ժողովը, որ ամբողջովին կը բաղ-
կանայ Գահիրէի հայ երիտասարդութեան լա-
ւագոյն տարրէն, նոր զարկ մը պիտի տայ ըն-
կերութեան ուղղութեանը եւ աւելի օգտակար
պիտի ընծայէ այդ հաստատութիւնը:

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ը

Թէեւ Նիւ-Եօքըի մէջ լուր կը պտրտի թէ
Միացեալ Նահանգներու դրօշը կը ծածանի
Մանիլի վրայ, սակայն Լոնտոնէ ստացուած
հեռագրեր տարակոյսի կենթարկեն այդ լուրը:

Թայիվ Նիւ-Եօքըի հեռագիր մը հրատա-
րակած է, ուր մէջ կըսուի թէ Ամերիկա իր
ձեռքը պիտի պահէ Ֆիլիպին կղզիները
մինչեւ պատերազմին վերջնալը, որպէս զի
եթէ Սպանիա չուզէ պատերազմական ուժ-
գանք վճարել, Միացեալ Նահանգները զա-
նազան ծախսն եւրոպական ու է պետութեան
մը, նախապատուաբար Անգլիոյ:

—Սպանիոյ երեսփ. ժողովին մէջ կատա-
ղի տեսարաններ տեղի ունեցած են, ժողո-
վրդին գերագոյնութեան հետեւանքով: Պ.
Սակաթեան ամբաստանած են իբրեւ Մա-
նիլի աղէտին պատճառ եւ երեսին տուած են
պատրաստութիւններու պակասը՝ հակառակ
զաղթականութիւններու հանգանակած մե-
ծաքանակ դումարներուն:

Պ. Սակաթեան իր վրայէն նետած է ա-
մէն պատասխանատուութիւն եւ կոչում ըրած
է կուսակցութիւններու միութեան՝ Սպանիոյ
պատիւը պահպանելու համար: Իր ճառը մէկ
կողմէն ունեւնեցող եւ պոռչաւորներով խոկ
միւս կողմէն ծափերով ընդունուած է: Ե-
րեսփոխան մը յայտնի համարձակ դատա-
պարտած է միապետութիւնը, յայտարարե-
լով թէ ներկայ կարգ ու սարգը տապալուը
ամենամեծ հայրենասէր մը պիտի ըլլայ:

—Հալանան պաշարող ամերիկեան նա-
ւատորմի մեծագոյն մասը յանկարծակի
Քէյ-Ուէսթ գացած է ածուխ առնելու հա-
մար եւ շուտով ճամբայ ելած է նորէն: Կեն-
թագրուի թէ սպանիական նաւատորմի զի-
մաւորներ կերթայ: Արագնթայ լրաբեր նա-
ւեր ամբողջ Ատլանտեան ովկիանոսը պիտի
խուզարկեն:

Ծովային նախարարութիւնը որոշած է
սպանիական նաւատորմի իւր ճանքը Հալա-
նայ վրայ յարձակելէ առաջ:

—Կեդրոնական Ամերիկայի մէջ գտնուող
Նիւարակուայի, Բոսթա Ռիբայի, Սան Սալվա-
տորի, Հոնուրասի եւ Էքուաթօրի կառա-
վարութեանց Լոնտոնի հիւպատոսները, իրենց
համակրութիւնը յայտնելով հանդերձ Սպա-
նիոյ, թղթակցի մը յայտարարած են թէ ի-
րենց կառավարութիւնները չէզոք պիտի մնան:

—Մեքսիկայի հասարակապետութեան
նախագահը ապրիլ 23ին պետական ժողով
գումարած է: Արտաքին գործերու նախարա-
րը յայտարարած է թէ Մեքսիկա բոլորովին
չէզոք պիտի մնայ սպանո-ամերիկեան պատե-
րազմին մէջ:

—Սպանիական նաւատորմի իւր գլու-
նուիլը չգիտցուի. հաւանական է որ անոնք
միանան իւրաքանչիւր Բատիլլէի մէջ:

—Կըսուի թէ ամերիկացիք մտերմ Բոու-
թօ Ռիբայի վրայ պիտի յարձակին եւ թէ եր-
կու խումբ զօրք ցամաք պիտի հանեն Գու-
պայի հիւսիսային կողմը:

Քոնքես Սառայի ներկայացուց տեղի պիտի
ունենայ վաղը գիշեր Այուս Խալի թատրոնին մէջ:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Բարձր Խորվը հինգշաբթի առաւոտ ժա-
մը 7ին Աղեքսանդրի մեկնեցաւ մասնաւոր
կառավարութիւն: Կայարանին մէջ իրեն կը սպա-
սէին նախարարները, խոհարարները, պե-
տական քարտուղարները, վարչութեանց պե-
տերը, կառավարիչը, դատիչ բանակին ընդհ. հրամանատարը եւ եւրոպացի ու տեղացի դա-
սակարգէն շատ մը երեւելի անձնաւորութիւն-
ներ:

Շուգեկապը ճամբայ ելլալու պահուն
թնդանօթի 21 հարուածներ սղջունեցին Ն.
Բարձրութեան մեկնումը:

Նոյնպէս մեծ պատիւներ եղան Բարձր.
Խորվին մօր եւ կնոյ, որոնք մեկնեցան Գա-
հիրէէն միւսնոյն օրը, առաւոտն ժամը 8ը 5
անցած:

Ամենափառաւոր ընդունելութիւն մը ե-
ղած է Աղեքսանդրի մէջ Բարձր. Խորվին:

Կայարանին մէջ, որ շքեղօրէն զարդար-
ուած էր դրօշակներով, Ն. Բարձրութեան ընդ-
առաջ եկած էին Թոսուն Էօմէր եւ Ճէմիլ փա-
շաները, Աղեքսանդրիոյ կառավարիչ Իսմայիլ
փաշա Սապրի, անդիական եւ երիպտ սկան
բանակներու բարձրաստիճան սպաները, եւ-
րոպացի ու տեղացի նշանաւոր պաշտօնա-
տարներ, թերթերու ներկայացուցիչներ, դա-
տաւորներ, եւն. եւն:

Թնդանօթի հարուածներ եւ խորվական
քայլերգը բարի գալուստ մաղթեցին Ն. Բարձ-
րութեան:

Ամենուն մէյմէկ շնորհալի խօսք ընելէ
յետոյ, Բարձր. Խորվը կառք նստելով նախա-
րարապետ Մուսթաֆա Ֆէհմի փաշայի հետ,
Ռաս-էլ-Թինի պալատը դացած է:

Փողոցները ամբողջ զարդարուած էին եւ
հետաքրքիրներու հոծ բազմութիւն մը իր հա-
մակրութիւնը կը յայտնէր Ն. Բարձրութեան:

—Սուաքինէ եւ Ճիաաէէ Սիւէզ հասնող
Մեհալլա շոգենակին մէջ հնոցպան մը ժան-
տախտի երեւոյթ ունեցող հիւանդութենէ մը
բռնուած ըլլալու լուրը մտքերը շատ կը յու-
ղէ երկու օրէ ի վեր: Տակաւին ուրջ բան մը
չգիտցուիր: Տքթ. Պիթըր որ Սիւէզ զրկուած
էր քննութիւն մը բանալու համար, լի է Գա-
հիրէ վերադարձած է, սակայն տակաւին իր
տեղեկագիրը չէ ներկայացուցած:

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

ՆԱԽԱՌԱՐՈՒՄԻ ՄԸ ԾԱՆՔԵՐԸ

Միջակ մեծութիւնով գրահաւոր մը ամ-
սական մոտաւորապէս 30,000 ֆրանքի պէտք
ունի, սպաներու եւ նաւատորմներու համար:
Թաժաւորակ մը 7000 ֆրանքի եւ ամիզօ
մը 4000 ֆրանքի:

Գալով անունդին, դիւրին է հաշուել թէ
քանի իր կը նստի կառավարութեան Իւրաքան-
չիւր նաւատորմի միջին հաշուով օրական 1 ֆր.
15 սանթիմի պէտք ունի: Ուրեմն 600 նաւա-
յին զինուոր ունեցող գրահաւոր մը 21,000
ֆրանք կը ծախսէ ամսական, 150 հոգինոց
թաժաւորակ մը 5,000 ֆրանք եւ 70 հոգինոց
ամիզօ մը 2,500 ֆրանք:

Սակայն ասոնք ամենքը տակաւին բան
մը չեն նաւ մը զինելու համար պէտք եղած
գումարին բաղդատմամբ:

Տասը սանթիմէթ տրամագիծ ունեցող թնդանթ մը 6,200 ֆրանք կարծէ. քսանը եօթը սանթիմէթնոց թնդանթ մը 80,000 ֆրանք և երեսունը չորս սանթիմէթնոցը 147 հազար ֆրանք:

Ու դեռ չհաշուեցինք թնդանթի սայլակները, որոնք 3,500էն մինչեւ 60,000 ֆրանք կարծեն:

Թնդանթի իւրաքանչիւր հարուածի գինն ալ քիչ հետաքրքրական չէ: Տասը չորս սանթիմէթնոց թնդանթ մը մէկ հարուածով 66 ֆրանք կը սպառէ. քսանը եօթը սանթիմէթնոցը 1,350 ֆրանք, երեսունը չորս սանթիմէթնոցը 2,500 ֆրանք, երեսունը եօթը սանթիմէթնոցը 4,270 ֆրանք և քառասուն երկու սանթիմէթնոցը 5,010 ֆրանք:

Հապա թօրփինքը: Առաջ իւրաքանչիւրը 10,000 ֆրանք կարծէր, բայց հիմա քիչ մը աւելի ածանցած են. 7000 ֆրանքով և նոյն իսկ 5000 ֆրանքով կարելի է հատ մը ձեռք անցնել, մեծաքանակ գնումներու առեն:

Հապա ածուխը: Իւրաքանչիւր զրահաւոր օրական 1,400 ֆրանքի ածուխ կը սպառէ. բայց երբեմն այս գումարը կը կրկնապատկուի, նոյն իսկ կ'եռապատկուի, երբոր զրահաւորը արագ ընթանայ:

ՈՍԿԻՆ ԳԻՆԸ

Արդի պատերազմին առաջին արդիւնքներէն մէկը եղած է, հազուադիւս ապրանքի մը գինը բարձրացնել: Այդ ապրանքը ոսկին է: Հակառակ Թրանսիլանի, Աւստրալիոյ, Սիպերիոյ, Միացեալ Նահանգներու, Ալաբաքայի և առասպելական Բոնտայքի անուններուն, շատ հեռու ենք այն վայրկեանէն ուր բաւականաչափ դեղին մետաղ պիտի գտնուի ամբողջ աշխարհի համար:

Սա համառօտ ցանկը ատիկա պիտի կըրնայ հաստատել:

Սպանիոյ մէջ 100 ֆրանքի ոսկին կարծէ 172 ֆրանք արծաթ դրամ,

Բորթուկալի մէջ 100 ֆր.ի ոսկին 177.90

Իտալիոյ մէջ " " 108.40

Յունաստանի մէջ " " 141

Բայց ասոնք տակաւին բան մը չեն:

Պուէնոս-Այրէսի մէջ 100 ֆրանքի ոսկի ստանալու համար 269 ֆրանք 30 սանթիմ վճարելու է տեղական դրամով: Ռիօ-Եա-Նէյրոյի մէջ 100 ֆրանքի ոսկին 469 ֆր. 57 սանթիմ արծաթ դրամ կարծէ:

Գրալանը քանի մը ոսկիով հոն մտնողը, յանկարծ ինքզինքը հնգապատկը աւելի հաշուատ պիտի գտնէ:

ՏՕՔ. Ռ. ՈՒՐՅԱԼԵԱՆ

Ա. Կ. Ն. Ա. Բ. Ո. Յ. Ժ.

Պատիւ ունի ծանուցանելու թէ իր դարմանատունը հաստատած է Գոհիթէ, Պալաքի փողոց, Բաւալ վաճառատան մօտ, Մահրուսա Օթէլին մէջ, ուր պիտի ընկունի հիւանդները ամեն օր:

Տօք. Ուրֆալեան, նորագոյն գիւտերու միջոցաւ, քիչ ժամանակի մէջ կը գարտնէ շիւ աչքերը, հինցած կրամիլախիօնները և ընդհանրապէս ամեն տեսակ աչքի հիւանդութիւնները:

Ամեն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը, աղբատները ձրի պիտի դարմանէ, առաւօտեան ժամ 8էն 10:

2—8

Ա. Զ. Դ.

Հարտարապետ Պողոս Խորեան, վկայեալ Պողոս գեղարուեստական վարժարանէն, ճարտարապետական գրասենեակ մը բացած է Մուսի փողոց, ժամագործ Գրամէր ընկ. դէմ չէնքին երկրորդ յարկը: Կը ստանձնէ շինութեանց ու նորոգութեանց վերաբերեալ ամէն տեսակ ճարտարապետական յանձնարարութիւններ: Նաեւ փափաքողներուն գծադիտութեան և ճարտարապետութեան մասնաւոր դասեր կ'աւանդէ:

Գրասենեակը բաց է ամեն օր առաւօտեան ժամը 8էն 12 և 2, 5 7 (յ.մ.) 6—10

Դ. Ի. Մ. Ե. Յ. Բ.

Գ. Է. ՍԷԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ԳԱՀԻՐԷ Մուսի փողոց ԳԱՀԻՐԷ

ԱՄԵՆ ԲԱՅԱԿԻ ԳԻՆԸ ԳԻՆԸ ԳԻՆԸ	Եթէ կուզէք ոսկի ժամացոյցներ արանց կանանց 120 դր. և մինչեւ 2500 դր.
	Եթէ կուզէք արծաթ ժամացոյցներ 50 դր. և մինչեւ 200 դր.
	Եթէ կուզէք նիքէլ ժամացոյցներ 10 դր. և մինչեւ 100 դր.
	Եթէ կուզէք պատի և բօնադի բազմազան բանտիւներ գաղղիական եւ ամերիկեան
	Եթէ կուզէք նորաձեւ շքաներ ոսկի, արծաթ եւ ոսկեպաւս
Եթէ կուզէք այլ և այլ գոհարեղէնք աղանդեղեայ, ոսկի, արծաթ, ոսկեպաւս	

Դ. Ի. Մ. Ե. Յ. Բ.

Գ. Է. ՍԷԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄՈՒՍԲԻ ՓՈՂՈՑ ԳԱՀԻՐԷ 8—20

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱԻԱԳԵԱՆ

ԳԱՀԻՐԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՍԹԻԱՅԻ ԱՊԱՐԱՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախողները պիտի գտնեն եւրոպական լաւագոյն գործարաններէն բերուած թարմ դեղեր, չափաւոր գիներով: Դեղագիրները ամենայն խնամք և ուշադրութեամբ կը պատրաստուին:

Անգլիական և ֆրանսական սքեսիպիքներ: Թարմ հանգային ջուրեր, անուշահոտ քիւրմ եւն. բնալուծական և մանրագիտական քննութիւնը: Դեղարանա կը յաճախեն հայ և օտարազգի ծառի բժիշկներ:

Բժշկական ձրի խորհրդածութիւնք աղբատայ համար: 48—50

Ա. Զ. Դ.

Պ. Յակոբի կազմակերպած դաւանակի միմակա հանուրիւնը տեղի պիտի ունենայ առաջիկայ մայիս 8ին, կիրակի օրը: 4—4

ՆՈՐ ՓՈՒՌ

ՀԱՅԿԱԿԱՆ

ՏԱՐՊԷԼ ԿԻՆԷՆԱ ՓՈՂՈՑ

Ա. Զ. Դ.

Ստորագրեալքս պատիւ ունինք ծանուցանելու արդոյ հասարակութեան թէ ամուսն 1էն սկսեալ դնած ենք Տարպէ-Կինէնայի Հայկական փուռը և թէ մենք պիտի շարունակենք այսուհետեւ անոր գործառնութիւնները: Այդ փուռին գործելու եղաւ նախին մէջ խնամատ բարեկարգութիւններ ներմուծած ըլլալով՝ կարող պիտի ըլլանք եւրոպական ունէ փուռի մը պէս լիուրի գոհացնել իրենց վստահութեամբ զմեզ պատուող յաճախողները:

Կը սիրենք յուսով որ պատուական ազգայինք զմեզ պիտի բաջալերեն մեր այս ձեռնարկին մէջ:

Ս. Զուրիկեան եւ Եղբարք Հապագործեան

13—15

ՀԱՇՍԱՐԱՆ “ԼՈՒՍԻՆ,”

Քրէտի Լիօնէի բովընտի փողոցը Արեւ ճաշարանի ճիշտ դէմը նոր բացուած այս հայկական ճաշարանին մէջ յաճախողները պիտի գտնեն ընտիր սնունդ, կերակուրներու պէսախաղիւն, խընամեալ մաքրութիւն, փութիւտ սպասարկութիւն և դիւրամատչելի գիներ:

Ի մօտոյ նոր ճիւղ մըն ալ պիտի աւելցուի գարեջուրի և Բեպապի: 4—8

ՍԱՓՐԻՉ

ՕՇԱՆՆԷՍ ՊԵՅԼԷՐԵԱՆ

Բերայի ճարտար սափրիչներէն Օհանէս Պէյլէրեան որ մէկ ու կէս տարիէ ի վեր Գահիթէ հաստատուած է և մեծապէս գոհ թուեցած իր յաճախողները, այս անգամ իր նոր խանութին մէջ (Աթապա էլ Խատրա, Թրամուէլի կայարանին դէմ) ամեն դիւրութիւն ու հանգստաւստութիւն կ'ընծայէ մաքրութիւն, արագութիւն ու վայելչութիւն թէ ածիւման և թէ վարսայարգարութեան մասին:

ՅՕԹՕԿՐԱՅԻ ԷԺԻԲՍԻԷՆ

Ք. ՊԻՒՔՄԷՃԵԱՆ

ՇԱՐԱ ՄՈՒՀԱՍՏԷՏ-ԱԼԻ ԹԻԻ 120

Արհեստին վերջին կատարելագործութեան համեմատ հաստատուած այս լուսանկարչատան մէջ ամեն տեսակ լուսանկարներ կը հանուին գոհացուցիչ գիներով:

Ամեն մեծութեան ԱԿՐԱՆՑԻՍԸՄԱՆՆԵՐ:

9—10

Տ Պ Ա Ր Ա Ն

“ՓԱՐՈՍ” ԼՐԱԳՐԻ

ԿԸ Տ Պ Ա Գ Ր ՈՒՆ

ԱՄԵՆ ԼԵՋՈՒԻ ՇՐԱՊԱՐԱԿԱՆ

ՄԱՀԱՋԻ, ՀՐԱԻՐԱԳԻՐ, ԱՅՅԱՔԱՐՏ

ՅԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳԼՈՒԽ

Տ Ո Մ Ս Ե Ր

Եգիպտոսի որ և է քաղաքէ կամ գիւղէ եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք և փութալ կը կատարուին:

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Այցեխարտերու եւ տուներու

Տպարանը բաց է ամեն օր բացի կիրակի եւ Տօն օրերէ, առաւօտեան ժամ 7էն երեկոյեան ժամ 7:

ԼՈՒԱՑԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻՉ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՍԷԹԻ, ՇՐԱՆՏ ԱՋԱՏԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒԱՑ ամեն տեսակ ճերմակեղէններ ու հազուատներ. ԿԱՐԴԻԷ արանց և կանանց չապիկներ, չըղազեատներ, և ին. մաքրութիւն, ճշգրտահաշիւութիւն, և խիստ չափաւոր գին: 17—24

Le Gérant: Dr. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի